



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ա Շ Ն Ա Ն Ա Յ Ա Ն Ի
Կ Ա Մ Պ Ա Ն Ի Ա

Ա. ՅԵՐԿԱՆՅԱՆ

Ա. Շ Ն Ա. Ն Ա. Յ Ա. Ն Ի
Ա. Գ Բ Ո Մ Ի Ն Ի Մ Ո Ւ Մ Ը

63

Կ-68



ԵՏՋՐԱՏ • 1931 • ՅԵՐԵՎԱՆ

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԱԳՐՈՍԻՆԻՄՈՒՄ

Նորհրդային Հայաստանի բնական պայմանները (հողային, կլիմայական, աշխարհագրական և այլն) միանգամայն նպաստավոր են տեխնիկական մշակույթների և անասնապահության զարգացման համար: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը նույնպես հրամայական պահանջ է դնում մեր առջև դաշտային և նախալեռնային շրջաններում զարգացնելու տեխնիկական մշակույթներ, ինչպես որինակ՝ բամբակ, ծխախոտ, շաքարի ճակնդեղ, յուղատու և թեկատու բույսեր և այլն, վորոնք և հանդիսանալու յեն այդ շրջանների գյուղատնտեսության հիմնական ճյուղը, իսկ լեռնային շրջաններում գերակշռող պետք է լինի անասնապահությունը:

Սակայն, դեռևս հացարույսերի մշակութային մեր մի շարք շրջաններում կամ հանդիսանում է գյուղատնտեսության հիմնական ճյուղը և կամ անասնապահության հետ միասին միևնույն մակարդակի վրա յե գտնվում:

Բամբակագործական շրջաններում, կարելի յե ասել, վոր հիմնականում հացարույսերի մշակութայինը գուրս է վանված: Հացարույսերի մշակութայինը անասնապահական շրջաններում նույնպես հեռագհետն պետք է կրճատվի, տեղի տա կերբույսերի, խոտացանութային և արմատապտուղների զարգացմանը:

ՊԵՏՐՍԻ ՏՊԱՐԱՆ
 ԳԼԱՎԼԻՏ 6737 (Բ)
 ՀՐԱՏԱՐԱԿ. № 1818
 ՊԱՏՎԵՐ 4785
 ՏԻՐԱԺ 5000



37937-Ա

Հացաբույսերի մշակութունը հետզհետե կրճատելով և նրան դարձնելով գյուղատնտեսութան յերկրորդական ճյուղ, միաժամանակ պետք է աշխատել քարձրացնելու հացաբույսերի բերքատվութունը, վոր պիտին մեզ մոտ դեռևս ցածր աստիճանի վրա յե գլխունըլում :

Հացաբույսերի ցածր բերքատվութունը հետևանք է այն հանգամանքի, վոր մեր կոլխոզները և չքավոր առ միջակ գյուղացիները դեռ իրենց անտեսութունը չեն տանում սպիտնալ ձևերով և լիովին չեն գործադրում ագրոնոմիական այն նվաղագույն միջոցները (ագրոմինիմումը), վորոնք անհրաժեշտ են հացաբույսերի լավ բերքն ապահովելու համար :

Մեր կուսակցութունը և խորհրդային իշխանութունը խոշոր ուշադրութուն են դարձնում թե՛ կոլեկտիվ և թե՛ աշխատավորական գյուղական անտեսութուններում ագրոմինիմումի ձեռնարկումները մասնաշաղկանացնելու և կիրառելու վորով և առաջին 5-ամյակին գյուղատնտեսական կուլտուրաների և մասնավորապես հացաբույսերի բերքատվութունը 30-35 տոկոսով բարձրացնելու ուղղությամբ : Ագրոմինիմումի միջոցով մենք հնարավորութուն ունենք ավելի կազմակերպված ու ծրագրային կարգով վերակառուցելու գյուղատնտեսութունը և ագրոնոմիական տեխնիկական գիտելիքները լայն մասսաների սեփհականութուն գարձնելու :

Դժբախտաբար դեռևս ագրոմինիմումի վրա հարկ չեղած ուշադրութունը չի դարձվում : Ագրոմինիմումի վերեւ ձեռնարկում պարտադիր դարձնելու խնդիրը՝ կուլտնտեսութուններում և գյուղի չքավոր առ միջակ

անտեսութունների ընդհանուր ժողովում կամ յերբեք քննության չեն առնվել, կամ յեթե վորեւ պարտադիր վորոշում ունեցել են, այնուհետե չեն հետևել այդ վորոշման լրիվ կատարմանը :

Մի շարք պարզ ագրոնոմիական ձեռնարկումներ, ինչպիսիք են՝ սերմերի զտումը, ախտահանելը, արտերը քարերից մաքրելը, միջնակների վերացնելը, շաքացանքալ, աշնանացանի համար վաղ ցել կատարելը և այլն, կոլեկտիվ անտեսութունների և գյուղարտադրական միավորների համար պետք է հանդիսանան՝ վորպես պարտադիր միջոցառումներ և դրանց մասին բոլոր կուլտնտեսութունները և գյուղի չքավոր առ միջակ անտեսութունների ընդհանուր ժողովները պետք է ունենան իրենց վորոշումները :

Այս գրքույկի նպատակն է տալ ընթերցողին աշնանացան հացաբույսերի մշակության այն անհրաժեշտ ագրոմինիմումը, վորի կիրառումով ապահովված կլինենք աշնանացանից ավելի բարձր բերք ստանալու հնարավորությունը :

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միանգամայն անվիճելի յե, վոր ամեն տեսակի մշակութի հետևապես և աշնանացանի հողը անպայման պետք է վարվի գութանով, վորովհետե գութանով վարած հողը ավելի շատ բերք է տալիս չթով (արորով) վարածից :

Ինչո՞ւմն է կայանում գութանավարի առավելութունը չթով վարվածի հանդեպ : Այդ առավելութունը կայանում է նրանում, վոր գութանով հողն ավելի լավ

և մշակվում : Իսկ ինչո՞ւմն է կայանում հողի լավ մշակու-
կությունը՝ նրանում , վոր գութանը ավելի խորն է վա-
րում և բացի դրանից , հողի ստորին շերտը շուտ է տա-
լիս և հանում յերես , իսկ վերին շերտը տակույն է ա-
նում : Այս հանգամանքը կարևոր է այն տեսակետից ,
վոր՝

ա) մի կողմից հողի ստորին շերտն ընկնելով հողի
յերեսը՝ յենթարկվում է արելի , անձրեվի , քամու և
տղի ազդեցութեանը , նրա մասնիկներն ավելի արագու-
թյամբ են հողմնահարվում , վորի հետեմանքով հողի
մեջ սննդարար նյութերն ավելանում են . իսկ մյուս կող-
մից՝ հողի վերին շերտը մոլախոտերի և զանազան
բուսական մնացորդների հետ միասին ընկնելով տակը ,
իտում ու նեխվում են և այդպիսով դարձյալ հարստա-
ցնում են հողը սննդարար նյութերով :

բ) հողի մեջ պահպանվում է յեղած խոնավությունը
և պահասում ջրի գոլորշիացումը . և

գ) հողը փխրանում ու փափկանում է , վորը ան-
հրաժեշտ է բույսերի արժատների լավ դարգացման հա-
մար :

Յե՞րբ և ի՞նչպես պետք է կատարել հողի մշակու-
թյունը աշնանացան հացահատիկների համար : Աշնա-
նացանի համար ամենից լավը պետք է համարել ան-
ցելը : Մե ցել կոչվում է այն վարը , վորը կատարվում է
նախորդ աշնանից և մինչեմ հետեմյալ տարվա աշնա-
նացանը հողը թողնվում է վարված—սեմ դրությամբ :
Աշնանը վարած հողը՝ զարնանը , հենց վոր մի քիչ չորա-
նում է , պետք է յերկաթյա փոցխով փոցխել , վորպես-
զի հողի յերեսի շերտը փափկանա և ջրի գոլորշիացում
չլինի : Այնուհետեմ ամառվա ընթացքում մի քանի ան-
գամ , հենց վոր վարված հողի վրա մոլախոտեր յերե-

վան , պետք է կրկին փոցխել , վորի նպատակն է վոչըն-
չացնել մոլախոտերը և հողի վերին շերտը փխրացնել
խոնավություն պահպանելու համար :

Փորձերը ցույց են տվել , վոր սե ցելի վրա կատա-
րած աշնանացան ցորենի բերքը մոտ մեկ և կես անգամ
ավելի յե լինում սովորական բերքից :

Իսկ յեթե վորեւ հանգամանքից ստիպված հնարա-
վոր չի լինում սե ցելը պատրաստել աշնանից , այդ
դեպքում՝ աշնանացանի համար վարը պետք է կատարել
զարնանը ,—վորքան կարելի յե վաղ—և ասլա անմիջա-
պես փոցխել , իսկ այնուհետեմ ամառվա ընթացքում
բուսած մոլախոտերը վոչնչացնելու և հողը փութբ
դրությամբ պահպանելու նպատակով՝ զարձյալ մի
քանի անգամ փոցխել :

Հողի այս ձեմի մշակությունը կոչվում է վաղ ցել ,
վորը գրեթե նույն արդյունքն է տալիս բերքի տեսակե-
տից , ինչպիսին ստացվում է սե ցելի դեպքում :

Վորպես աշնանացանի բերքատլությունն ապահո-
վող աղբոմինիմում , վաղ ցելը պետք է համարել կա-
րեվորագույն միջոցներից մեկը : Վաղ ցելը անհրաժեշտ
է մանավանդ տեսակավոր ցանքսերի համար , ինչպես
որինակ՝ «ուկրաինկայի» և «կոպերատորկայի» : Յե-
ղած վաղ ցելերը առաջին հերթին անպայման պետք է
հատկացնել այդ ցանքսերին , վորովհետեւ «ուկրաին-
կան» և «կոպերատորկան» հողի լավ մշակության տե-
ուակետից ավելի խստապահանջ են : Փորձերն ապացու-
ցել են , վոր վաղ ցելերի վրա կատարված «ուկրաին-
կայի» և «կոպերատորկայի» ցանքսերը ավել են գրեթե
կրկնակի բերք , քան այն ցանքսերը , վորոնք կատարվել
են ցանքսից անմիջապես առաջ վարված հողերում :

Ընդհանրապես պետք է լավ իմանալ, վոր աշնանա-
ցան հացարույտների մշակութայն համար վորքան հողը
չառ է վարված, այնքան լավ: Այս հանդամանքը աչքի
առաջ ունենալով, ծայրահեղ դեպքում միայն, յեթե
աշնանացանի համար պատրաստի վաղ ցելեր չլին, ա-
պա հենց վոր դարնանացանի բերքը հավաքվում է, ա-
դատված տարածութունը անմիջապես պետք է վարել
— խողանավար կատարել — ու թողնել աշնանացանի հա-
մար:

Յեթե մինչեւ աշնան ցանքն սկսելը վաղ կատարած
ցելը բավական պնդանում է, ապա պետք է կրկնավար
կատարել: Կրկնավարի համար պետք է գործադրել յեր-
հու կամ յերեք խոփանի դութաններ: Կրկնավարը ավելի
յերեք պետք է անել:

ՍԵՐՄԻ ԶՏՈՒՄԸ

«Ի՞նչ կցանես, այն ել կհնձես», ասում է հին ա-
ռածը: Այս ասված է նրա համար, վոր ինչպիսի սերմ
վոր ցանենք, դրա համապատասխան ել բերք կստա-
նանք. լավ վորակի սերմից անշուշտ ավելի բարձր բերք
կստացվի, իսկ վատ սերմից լավ բերք չպետք է սպասել:
Դրա համար ել պետք է սերմացվի ընտրութայն վրա
չառ լուրջ ուշադրութուն դարձնել և ցանելու համար
պատրաստել այնպիսի սերմացու, վորը բարձր բերք
սպասովի: Այդ կարեւոր խնդրի վրա վոչ մե ջանք
չպետք է խնայել:

Ինչպիսի սերմացու պետք է համարել լավը և
ցանքի համար պիտանի: Սերմացուն պետք է լինի ա-
ռողջ, խոշոր և ծանր, բացի դրանից, նա իր մեջ չպետք
է պարունակի դանդաղ մոլախոտերի սերմեր, ջարդված

հատիկներ և կողմնակի աղբ (հող, քար և այլն):

Ցանելու համար պիտանի և ընտիր սերմացու ստա-
նալու համար ձեռքի տակ յեղած սերմացուն պետք է
զտել սերմազտիչ մեքենայով: Նախքան սերմազտիչ
մեքենայով զտելը, սերմացուն պետք է քամհարով մաք-
րել հողից, մոլախոտերի սերմերից, հարդից և ջարդ-
ված սերմերից, վորից հետո միայն սերմացուն զտվում
է սերմազտիչով:

Սերմազտիչի աշխատանքը կայանում է նրանում,
վոր նա հատիկները բաժանում է խոշոր ու մանր տե-
սակների և բացի այդ, առանձնացնում է սերմացվի մեջ
յեղած գլուխի հատիկները:

Ցանելու համար վորպես լավագույն սերմացու ոգ-
տագործվում է սերմազտիչ մեքենայի միջոցով ստաց-
ված խոշոր ու ծանր հատիկը:

Նկատի ունենալով սերմազտման կարեւոր նշանա-
կութունը՝ բերքատվութայն բարձրացման տեսակետից
և այն հանդամանքը, վոր մեզ մոտ միանգամայն հնա-
րավոր է հացարույտների ամբողջ սերմացուն զտել, Հա-
յաստանի Ժողովոմխորհն ունի վորոշում այն մասին,
վոր սերմերի զտումը բոլորի համար պետք է համարել
պարտադիր: Ներկայումս Խորհրդային Հայաստանում
կա այնքան սերմազտիչ մեքենա, վոր միանգամայն ա-
պահովում է սերմերի լրիվ զտումը: Հարկավոր է միայն
սերմազտման աշխատանքները տանել կազմակերպված
ձեւով և ժամանակին: Այդ տեսակետից ամենից նպա-
տակահարմարը պետք է համարել սերմազտումը կատա-
րելու հացահատիկների հենց կարելու ժամանակ դաշ-
տում և նախորդ պատրաստելու պահանջվող սերմա-
ցուն: Յեթե սերմազտումը կատարվում է ամառվանից
և յեղած սերմազտիչ մեքենաներն անդադար ոգտագործ-

վում են, ապա կարելի յե միանգամայն վստահ լինել, վոր վոչ միայն լրել կգտովի աշնանացանի սերմացուն, այլ և հնարավոր կլինի մինչև աշուն գտել ու պատրաստել նաև յեկող դարնանացանի ամբողջ սերմացուն:

ՍԵՐՄԻ Ա.ԵՏԱ.ՀԱՆՈՒՄԸ

Յորենի, դարու և այլ հացահատիկների սերմերը հաճախ վարակվում են մրիկ կոչված սնկային հիվանդութամբ, վորի հետևանքով բերքատուլութունը աստիկ ընկնում է: Մրիկով վարակված հասկերն սկսում է սևանալ, հատիկները լցվում են սև փոշով: Մրիկ հիվանդութունը մեծ չափով տարածված է լինում լեռնային, խոնավ վայրերում, բայց հաճախ լինում է նաև մնացած վայրերում, մասնավորապես անձրևային, խոնավ տարիներում:

Մրիկ հիվանդութունից ազատվելու համար ցանելուց առաջ սերմացուն պետք է ախտահանել, այսինքն՝ մրիկ պատճառող վարակը—մրիկի սաղմերը, վորոնք գտնվում են սերմացու հատիկների վրա—մեռցրնել:

Ախտահանման ամենադորձածական և մատչելի միջոցը համարվում է սերմացուն ֆորմալինով կամ պղնձի արջասպով լվանալը:

Փորմալինով ախտահանելիս պետք է վերցնել 300 մաս ջուր և մեկ մաս ֆորմալին, խառնել միմյանց հետ և լցնել կիսատակառի մեջ: Այնուհետև սերմացուն սփռել բրեզենտի կամ կարպետի վրա և վրան սրսկել պատրաստած ֆորմալինի հեղուկն ու թիակով խառնել այնքան, վոր ամբողջ սերմը թրջվի: Սերմացուն թրջելուց հետո հավաքել, կույտ կաղմել և վրայից ծածկել բրեզենտով, կարպետով կամ տոպրակներով: Սեր-

մացուն ծածկված դրուժյամբ պետք է թողնել ուղիղ յերկու ժամ, ապա ծածկոցը բանալ ու սերմացուն դարձյալ փռել, վորպեսզի չորանա:

10 ցենտներ սերմացու ախտահանելու համար բավական է կես կիլո ֆորմալին:

Պղնձարջասպով ախտահանելիս կիսատակառի մեջ լցնում են 3 և կես դույլ ջուր ու մեջը լուծում են 400 դրամ պղնձարջասպ (վորը նախորդ մանրացած պետք է լինի) և լավ խառնում: Այնուհետև սերմացուն լցնել տոպրակի մեջ խորասուղել պղնձարջասպի լուծվածքի մեջ: Տոպրակով սերմացուն այդ լուծվածքի մեջ պետք է թողնել 5 րոպեյի չափ, վորպեսզի բոլոր հատիկները լավ թրջվեն, հետո հանել ու փռել չորանալու: 10 ցենտներ սերմացվի ախտահանման համար կպահանջվի 2 կիլո պղնձարջասպ:

Սերմերի ախտահանման նկարագրված 2 ձևն էլ կոչվում է թաց ախտահանում: Բացի այդ գոյութուն ունի նաև չոր ախտահանում, վորը բավականին հաջող կերպով գործադրվում է վերջերս: Չոր ախտահանման համար ոգտադորձվում են անջուր պղնձարջասպ, ամխաթթվուտային պղինձ, կամ փաթիղյան կանաչ: Այդ ձևով ախտահանելիս՝ հատուկ ախտահանիչ մեքենայի մեջ պետք է լցնել հիշված դեղորայքից մեկն ու մեկի փոշին սերմացվի հետ միասին և լավ խառնել:

Չոր ախտահանման առավելութունը կայանում է նրանում, վոր համեմատաբար աշխատանքն ավելի արագ է կատարվում և բացի այդ, ախտահանված սերմացուն ավելի յերկար ժամանակ կարելի յե թողնել մինչև ցանելը, մինչդեռ թաց ձևով ախտահանելիս, խուլույն պետք է ցանել:

ՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Աշխատանքային հացահատիկների բերքատվության համար մեծ նշանակություն ունի այն հանդամանքը, թե յե՞րբ է կատարվում ցանքը: Ընդհանրապես, վոբ-պես կունոն, պետք է ընդունել, վոր ինչքան շուտ է ցանված լինում աշխատանքային հացահատիկը, այնքան լավ է գլխանում ձմրան ցրտերին: Յանքի վաղ կատարելը մանավանդ խիստ կարևոր է լեռնային շրջանների աշխատանքային առաջավոր ցանքերի համար, ինչպես որ ըրինակ «ուկրաինիան» և «կոպերատորիան»:

Լեռնային շրջաններում աշխատանքային ամենալավ ժամանակը պետք է համարել սեպտեմբերի սկիզբը և պետք է աշխատել մինչև սեպտեմբերի վերջը ավարտել ցանքը:

Նախալեռնային շրջաններում ցանքը պետք է ավարտել մինչև հոկտեմբերի վերջը, իսկ դաշտավայրերում մինչև նոյեմբերի 10-ը:

ՇԱՐՔԱՅԱՆՔ

Յանքի ամենալավ յեղանակը պետք է համարել շարքացանքը, վորը կատարվում է շարքացան մեքենայով: Շարքացան մեքենայով կատարած ցանքը շողացանի հանդեպ ունի մի շարք առավելություններ: Վորո՞նք են այդ առավելությունները:—

ա) Շարքացան մեքենայով ցանելիս լինում է սերմի խնայողություն 20-ից 25 տոկոսի չափով:

բ) Սերմերը հողի մեջ թափվում են միմյանցից հավասար հեռավորության և միևնույն խորություն վրա, մինչդեռ շողացանի դեպքում սերմը մի տեղ շատ է թափվում, մյուս տեղը քիչ:

դ) Սերմերն ընկնում են հողի խոնավ շերտի մեջ

համաչափ ու միաժամանակ բոլորը ծլում են և միաժամանակ էլ հասնում:

դ) Ծնորհիվ թվածս առավելությունների, շարքացան մեքենայով ցանված հացաբույսերի բերքը սովորաբար ավելի բարձր է քան շողացանինը:

Շարքացան մեքենան բանեցնելուց առաջ անհրաժեշտ է ստուգել այն և հարմարեցնել ցանքի պահանջին, այն է՝ վոբ-քան պետք է ցանվի մի հիկտար տարածության վրա և ի՞նչ խորությամբ: Առանց շարքացան մեքենայի կանոնավոր հարմարեցման, խորհուրդ չի տրվում նրանով ցանք կատարել:

Յանքը մեքենայով կատարելուց առաջ վարած հողը յերկաթյա փոցխով պետք է լավ տափանել, կոշտերը մանրել ու հավասարեցնել, վորպեսզի մեքենայի խոփիկները հավասար խորություն լինեն և սերմը միևնույն խորության մեջ ցանվի:

Վորպես քաշող ուժ շարքացան մեքենայի համար պետք է դերադասել ձին, քանի վոր ձիով ցանքը թե աբաղ կկատարվի և թե շարքացան մեքենան կաշխատի համաչափ և կանոնավոր: Մեկ գույք ձին 10-11 շարքացան մեքենայով որակյան կցանի մոտ 4-5 հեկտար տարածություն:

Հայաստանի մի շարք շրջաններում շարքացան մեքենաները բանեցնելու համար հարկավոր քանակությամբ ձի դժվար է լինում ձարել, այդ դեպքում միակ քաշող ուժը հանդիսանում է յեղը, վոր և պետք է ոգտադործվի շարքացան մեքենաների համար, չնայած վոր յեղան արտադրողականությունը 30-40 տոկոսով ցածր է ձիու հետ համեմատած:

Հայաստանում այժմ կան բավականաչափ շարքացան մեքենաներ, վորոնք դժբախտաբար մինչև որո հա-

նոնավոր և լրիվ չեն ոգտագործվում: Յեղած մեքենաների կանոնավոր և լրիվ ոգտագործմամբ միանգամայն հնարավոր կլինի շարքացան մեքենայի համար պիտանի աշնանացանքի ամբողջ տարածությունը կատարել շարքացան:

Կոլեկտիվ տնտեսություններն անսպախման իրենց բոլոր ցանքերը պետք է կատարեն շարքացան մեքենայով:

ՏԵՄԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՅԱՆՔԸ

Հացահատիկային բույսերի բերքատվությունը բարձրացնելու տեսակետից խոշոր նշանակութիւն ունի տեղական անվորակ սերմացվի փոխարեն ավելի բերքատու տեսակավոր սերմերի ցանքը:

Սորհրդային Հայաստանի մի շարք լեռնային շրջաններում, ուր առաջներում աշնանացանք գրեթե չէր կատարվում, վերջին 3-4 տարվա ընթացքում մեծ հաջողութեամբ սկսվում են մշակվել «ուկրաինկա» և մասամբ «կոոպերատորկա» կոչվող աշնան ցորենի տեսակները: Այդ յերկու տեսակն էլ իրենց բերքատվութեամբ արդեն բավականաչափ աչքի յեն ընկել: Սրանցից «կոոպերատորկան» ավելի լավ է դիմանում չորութեան, դրս համար էլ անջրգի հողերում պետք է հպձնարարել «կոոպերատորկա» տեսակը:

«Ուկրաինկան» սովորաբար պետք է ցանել ջրովի հողերում: Յանկալի յե «ուկրաինկային» հատկացնել այն հողերը, վորտեղ նախ քան այդ ցանված է յեղել վեկա, գարու կամ վարսակի հետ խառն: Կարելի յե ցանել նաև շարքահերկ բույսերից հետո, ինչպես որինակ վագահաս կարտոֆիլից, յեգիսլոսցորենից, սիլոսից հետո: Ան-

սպախման պետք է խուսափել հացահատիկների ցանքից հետո աշնան ցորեն ցանել, վորովհետև հողը բավականին ուժաստատ է լինում հացբույսերից, իսկ աշնան ցորենը և հատկապես «ուկրաինկան» սիրում են ավելի պարարտ հող:

Դերի հողերում աշնան ցանքը (գլխավորապես «կոոպերատորկան») պետք է կատարել միայն լավ հերկած վաղ ցելերում, վորի մասին վերը խոսեցինք: Ծայրահեղ դեպքում միայն, յեթե վաղ ցելեր չեն կատարված, ցանել ուշ հերկից հետո:

Ցանքը պետք է կատարել անսպախման շարքացան մեքենաներով, հեկտարին 1,2—1,3 ցենտներից վոչ ավել:

Ամեն կերպ պետք է աչխատել ցանքը շուտ կատարել, վորովհետեւ դրանից միայն կարելի յե շահել: Զրովի հողերում «ուկրաինկայի» ցանքը պետք է սկսել սեպտեմբերի սկզբին. ամենաուշը ցանքը պետք է վերջացնել մինչև սեպտեմբերի 25-ը:

Անջրգի հողերում յեթե այդ ժամանակամիջոցում անձրևներ չդան, ցանքը պետք է հետաձգել, բայց վոչ ուշ, քան հոկտեմբերի 5-8-ը, վորից հետո պետք է համարել ցանքն անհուսալի, վորովհետև այդ ժամանակ սկսվում են աշնան ցրտերը, վորոնք վատ են ազդում աշնանացանի ծիլերի վրա:

Մինչև այժմ կատարած փորձերն ապացուցել են, վոր «ուկրաինկայից» կարելի յե մեծ բերք ստանալ, հեկտարից մինչև 20-25 ցենտներ, յեթե նա ցանվում է լավ մշակված հողում և լրիվ կիրառվում են աղբոնոմիական բոլոր պահանջները:

Տեսակավոր ցանքերը պետք է կատարել համատարած հողամասերի վրա, վորպեսզի նրանք չխառնվեն տե-

զաւհան ցանքերի հետ : Այդ արվում է նրա համար , լոր պետզի տեսակավոր սերմերը չայլասերվեն և պահպանեն իրենց տեսակավոր մաքրութիւնը :

Վորպեսզի տեսակավոր սերմերն իրենց տեսակավոր մաքրութիւնը չկորցնեն , պետք է նպատակահարմար համարել տեսակավոր սերմերի բազմացնելու գործը հանձնարարել վորոշ կոլեկտիվ անասնութիւնների (սերմարուծական կոլտնտեսութիւնների) : Այդ կոլտնտեսութիւններից ստացված տեսակավոր սերմացուն այնուհետև կարելի չէ տարածել ալյալ շրջանում :

ԱՇՆԱՆԱՎԱՐ

Գարնանացան մշակութիւնների և գլխավորապես տեխնիկական մշակութիւնների բերքատուութիւնն բարձրացման ամենակարեւոր միջոցներից մեկն է աշնանավարը : Աշնանացանի հետ զուգընթացաբար պետք է տանել նաև աշնանավարի աշխատանքը :

Աշնանավարը պետք է կատարել վորքան կարելի չէ վաղ և խորը : Վարած հողը չպետք է փոցխել , այլ հենց վարած դրութեամբ , կոշտերով պետք է թողնել մինչև դարուն : Չմբան ստոնամանիքի և ձյան աղդեցութեան տակ հողերի կոշտերը փխրանում են և բացի այդ , կոշտերի արանքում ամբարվում է մեծ քանակութեամբ խոնավութիւն : Բացի այդ , աշնան հերկից վորչընչանում են բոլոր մոլախոտերը և բույսերի մնացորդները , վորոնք ընկնելով հողի տակ՝ փտում են ու հողը աննդարար նյութերով հարստացնում—պարարտացնում :

Աշնան վարած հողը գարնանն այնքան փոխկացած ու փուխը դրութեան է լինում , վոր նրա հետագա մշակութիւնն առանձին դժվարութիւն չի ներկայացնում : Վաղ գարնան , հենց վոր հողը այնքան չորու-

ցած է լինում , վոր ցելիի նման չի կաշում , պետք է յերկաթյա փոցխով փոցխել և կոշտերը փոխկացնել :

Վորպես ագրոմինիում աշնանավարն անպայման պետք է պարտադիր լինի մանավանդ դարնան տեխնիկական կոլտնտեսաների՝ բամբակի , ծխախոտի , շաքարի ճակնդեղի համար և այլն : Աշնանավարը հատկապես մեծ նշանակութիւն ունի չորային վայրերի համար , վորովհետև շնորհիվ աշնան կատարած հերկի՝ մեծ քանակութեամբ խոնավութիւն է ամբարվում հողի մեջ :



Պատվիւ 6737 (բ) Հրատ. 1818. Պատ. 1785. Ձեւած 5000.

« Ազգային գրադարան



NL0276871

14711

1931 г. 1/2 д.



С. ЕРКАНЯН

АГРОМИНИМУМ
ОСЕННЕГО СЕВА

ГОСИЗДАТ 1931 ЭРИВАНЬ